ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԳԵՑԻԿ ԽՄԲԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԵՐԳԸ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Հայաստանի Պետական երգեցիկ խումբը մի քանի տասնյակ տարիների պատմություն ունի։ Նա իր կատարողական բարձր արվեստով նվաճել է ոչ միայն Հայաստանի, այլև Սովետական Միության մյուս ռեսպուբլիկաների երաժշտասեր հասարակության սերն ու հարգանքը։

Հայաստանի Պետական երգեցիկ խմբի ղեկավար պ. Ա. Տեր-Հովհաննիսյանը Մոսկվայից վերադառնալուց հետո ձեռնարկեց իր

Հայաստանի Պետական երգեցիկ խումբը

Այս տարի հունիսին Մոսկվայում հայկական արվեստի և գրականության տասնօրյակի օրերին հայ երգի և երաժշտության նվաճումները ցուցադրելու գործում, Հայաստանի Պետական երգեցիկ խումբը, պ. Արամ Տեր-Հովհաննիսյանի տաղանդավոր ղեկավարությամբ, կարողացավ հայ ժողովրդական երգի և երաժշտության հմայքով մի անգամ ևս թռվել Մոսկվայի հայ և օտար երաժշտասեր հասարակության հոգին, և երգի թևերով փոխադրել նրանց Հայաստանի գեղածիծաղ դաշտերն ու արտերը, մեր զովասուն սարերն ու սաղարթախիտ անտառները, պայծառ ու ջինջ քաղաքներն ու գյուղերը։

Հայաստանի Պետական երգեցիկ խմբի ղեկավար պ. Ա. Տեր-Հովհաննիսյանը Մոսկվայից վերադառնալուց հետո ձեռնարկեց իր նոր ծրագրի՝ ժողովրդական խմբերգների հետ նաև առաջին անգամ լինելով հայ եկեղեցական երգերի համերգային ներկայացման շնորհակալ աշխատանքներին։ Մեր ժողովրդական և եկեղեցական երաժշտությունը կապված են եղել իրար։ Մեր եկեղեցական երգերի մեջ էլ հայ ժողովուրդը դրել է իր սիրտը, հավատը, ապագա լավագույն կյանքի իր երազը, իր վիշտը, իր բողոքը։ Հայ ժողովրդական և հոգևոր երգերը բխում են նույն ակունքից՝ հայ ժողովրդի սրտի

խորքից, հոգուց, ձգտումներից և հույսերից։ Նույն ժողովուրդն է ստեղծագործել թե՛ մեր գեղջուկ երգերը և թե՛ մեր հոգևոր բանաստեղծության սքանչելի նմուշները, որոնք իրենց գեղարվեստական բարձր արժեքով պատվավոր տեղ են գրավում համաշխարհային կրոնական երաժշտության պատմության մեջ։

Երկար ամիսների տքնաջան և լարված աշխատանքներից հետո, պ. Ա. Տեր-Հովհաննիսյանին հաջողվեց Երևանի Հայկական ֆիլհարմոնիայի համերգային փոքր դահլիճում տալ առաջին եկեղեցական համերգը, որն արժանացավ ջերմ ընդունելության երաժշտասեր հասարակության կողմից։

Նորին Ս. Օծության Վեհափառ Հայրապետի հրավերով և նախագահությամբ, Հայաստանի Պետական երգեցիկ խումբը, նոյեմբերի 15-ին, երգեց ունեցավ այս անգամ Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի դահլիճում Մայր Աթոռի միաբանության, Ճեմարանի դասախոսական կազմի, ուսանողության և վանքի պաշտոնեության համար։

Երգեցիկ խումբը պ. Ա. Տեր-Հովհաննիսյանի ղեկավարությամբ համերգի առաջին մասում կատարեց ժողովրդական երգեր անմահ Կոմիտաս վարդապետի և Կարա-Մուրզայի երաժշտական ստեղծագործություններից։ Երգեցիկ խումբը մեծ հաջողությամբ կատարեց Կոմիտաս վարդապետի «Կուժն առա» և «Գնա, գնա», «Սարերի վրով գնաց» և «Էս գիշեր լուսը տեսա», «Փեսին գովքը», «Ինչո՞ւ Բինգյոլը մտար», «Դուքանի երգը» ստեղծագործությունները, իսկ Կարա-Մուրզայի «Լեպս լեպս», «Զինչ ու զինչ ատամ», «Այրագյաղ» երգերը։

Համերգի երկրորդ մասում, խմբերգային արվեստի վարպետ պ. Արամ Տեր-Հովհաննիսյանի նոր մեկնաբանությամբ, Հայաստանի Պետական երգեցիկ խումբը դահլիճում հնչեցրեց, վեհ ու հանդիսավոր, հայ եկեղեցական երաժշտության հիասքանչ նմուշները՝ մեծ երաժիշտ Մակար Եկմալյանի «Հայր մեր», «Գովեա Երուսաղէմ», «Ցամենայնի», «Իշխանութիւնք» և «Սուրբ, Սուրբ», «Միայն Սուրբ» և «Ամեն։ Հայր Սուրբ», և ապա Կոմիտաս վարդապետի «Ո՞վ զարմանալի» և «Այսօր ձայնն հայրական», «Տէր, ողորմեա» և «Հայր մեր» հոգևոր ստեղծագործությունները։

Համերգի տպավորությունը ավելի քան խանդավառ էր, ոգևորիչ, հոգեկան բավարարության զգացմունքով հագեցած։

Համերգի վերջում Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնեց Պետական երգեցիկ խմբին, օրհնեց խմբի անդամներին, ղեկավարին, և բոլորին մաղթեց նորանոր հաջողություններ հայ երգի և երաժշտության բարձրացման բնագավառում։

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱՀԱՆԱ ՄԱՐՈՒՔՅԱՆ